

Գեղամա Հեռուստաընկերության ներքին խմբագրական ուղեցույց *

6, Սարգիս Սևանեցի, 1505, ք. Սևան, Գեղարքունիքի մարզ, ՀՀ
+374 261 2 56 58 geghamatv.stv1@gmail.com
1505, Sargis Sevanetsi St., Building 6, Sevan, Gegharkunik, Armenia

Մեր առաքելությունը

Մենք հասարակությանը մատուցում ենք որակյալ լրագրություն: Գիտակցում ենք, որ հավաստի, օգտակար և վստահելի տեղեկատվությունը կենսական անհրաժեշտություն ունի հասարակության համար:

Մեր նպատակն է տեղեկացնել հանրությանը, և այս առաքելությունն իրականացնելիս ձգտում ենք հարգել ժողովրդավարությունը, մարդու իրավունքները և բազմակարծությունը:

Մենք գիտակցում ենք, որ նման ուժը պահանջում է պատասխանատվություն, և ձգտում ենք, որ մեր լրագրողները դրսևորեն բարձր մասնագիտական վարքագիծ՝ միաժամանակ պաշտպանելով հետաքննելու և լուսաբանելու իրենց կարողությունը:

Խմբագրական ուղեցույցի նպատակը

Այս ուղեցույցի նպատակն է պահպանել և ամրապնդել լսարանի վստահությունը, ինչպես նաև պաշտպանել մեր լրատվամիջոցի (անկախ թողարկման ձևից) և մեր լրագրության բարեխղճությունը:

Ուղեցույցը պարունակում է մեր անձնակազմի համար կարևոր գործիքակազմ և հաստատում է մեր հանձնառությունը լրագրության առանցքային սկզբունքներին՝ ճշգրտությանն ու փաստահեն հաղորդակցությանը, անկողմնակալությանը և արդարությանը, մարդասիրությանն ու այլոց հանդեպ հարգանքին, խմբագրական անկախությանն ու թափանցիկության միջոցով հաշվետվողականությանը:

Ուղեցույցում ներկայացված են խմբագրակազմի, պայմանագրային աշխատակիցների և խմբագրական բովանդակության ստեղծմանն աջակցող բոլոր անձանց վարքագծից մեր ակնկալիքները: Դրանք ներառում են երեք հիմնական ոլորտ՝ խմբագրության ընդհանուր կառավարում և գործունեություն, խմբագրական հիմնական կանոններ և շահերի բախում:

Ուղեցույցը վերաբերում է ողջ անձնակազմին և կիրառվում են լրատվամիջոցի կառավարման կառուցվածքին համապատասխան: Դրանց պահպանումը մշտադիտարկվում է ղեկավար անձնակազմի և գլխավոր խմբագրի կողմից:

Ուղեցույցը նախատեսված է հանրության կողմից հեշտությամբ ընկալելի լինելու համար և կիրառելի է ողջ բովանդակության ստեղծման, լրահավաքության և արտադրական այն գործունեության նկատմամբ, որոնց համար հրապարակողը պատասխանատվություն է կրում:

Հաշվի առնելով սա՝ լրատվամիջոցը մշակում է օնլայն օգտատերերի ստեղծված բովանդակությունը կամ հանրությունից ստացված այլ տեղեկությունները ստուգելու և դրանց հետ աշխատելու մեխանիզմ:

Կիրառելով այս ուղեցույցը՝ «Գեղամա» հեռուստաընկերությունն իր գործունեությունը ծառայեցնում է հանրային շահին և հանրության տեղեկություն ստանալու իրավունքին:

Հանրային շահը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով.

- Անօրինական գործունեությանը, ոչ կոմպետենտությանը և ոչ էթիկական վարքագծին առնչվող հարցերի բացահայտում կամ քննարկում,
- Իրավիճակի պարզաբանում, երբ անձը կամ կազմակերպությունը հանրությանը մոլորեցրել է հանրային նշանակության հարցի վերաբերյալ կեղծ տեղեկություններ տարածելով,
- Անձի կամ կազմակերպության կողմից իր օրինական պարտականությունների չկատարման բացահայտում,
- Հասարակության բոլոր մակարդակներում պատշաճ կառավարում,
- Արդարադատության բաց, արդար և արդյունավետ գործունեություն,
- Հանրային առողջություն և անվտանգություն,
- Ազգային անվտանգություն,
- Հանցագործության կանխում և բացահայտում,
- Հասարակության տնտեսական, կրթական և սոցիալական զարգացում,
- Արվեստի կամ մշակութային ստեղծագործությունների քննարկում կամ վերլուծություն:

Պաշտպանելով հանրային շահը՝ «Գեղամա» հեռուստաընկերությունը հանձնառու է.

Ա. Ապահովել խմբագրական անկախությունը և երաշխավորել, որ գովազդային, հովանավորվող բովանդակության կամ կոմերցիոն այլ ձևերը հստակ նշվեն որպես

այդպիսին և տարբերակվեն լրագրության հիմնարար սկզբունքներին համապատասխան ստեղծված խմբագրական նյութերից:

Բ. Արգելել ցանկացած բովանդակություն, որը պարունակում է զրպարտություն, ատելության խոսք, անձնական կյանքի գաղտնիության խախտում կամ չարաշահում:

Այս սկզբունքները կարող են խմագրական անձնակազմի անդամների աշխատանքային պայմանագրի մաս կազմել և կիրառվել կարգապահական կամ խրախուսման, առաջխաղացման միջոցների կիրառման կամ աշխատանքի ընդունման գործընթացներում:

Հետևելով լրագրության հիմնարար սկզբունքներին՝ **«Գեղամա»** հեռուստաընկերության լրագրողները կպաշտպանեն իրենց և իրենց գործընկերների անկախությունը և հեղինակությունը:

Կարևոր է, որ կազմակերպության համար աշխատող ֆրիլանսերները լրատվամիջոցի հանձնարարությունները կատարելիս ևս պահպանեն այս սկզբունքները:

1. Ընդհանուր պրակտիկա

ա) Անանուն հրապարակումներ

«Գեղամա» հեռուստաընկերության կողմից պատվիրված հոդվածները անանուն կամ կեղծանունով հրապարակվում են բացառիկ դեպքերում, օրինակ, երբ հեղինակի անվտանգությունը, գաղտնիությունը կամ ապրուստի միջոցները վտանգված են, և միայն պատասխանատու խմբագրի թույլտվությամբ: Նման դեպքերում ընթերցողներին տեղեկացվում է, որ հեղինակի ինքնությունը բացահայտված չէ, և տրվում է հիմնավորում: Այս կանոնը կարող է չտարածվել այն հեղինակների վրա, ովքեր գործում են լրատվամիջոցի կողմից հաստատված կեղծանվամբ և **«Գեղամա»** հեռուստաընկերության կողմից նրանց պատվիրվել է այդպիսի կարգավիճակ:

բ) Վճարներ խմբագրական նյութերի համար

Որպես կանոն, մենք չենք վճարում աղբյուրներին, բացառությամբ եզակի ֆրիլանսեր աղբյուրների: Այս խիստ բացառությունները հաստատում է պատասխանատու խմբագիրը կամ նրա տեղակալը:

Հանրային պաշտոնյաների հետ աշխատելիս լրագրողները պետք է տեղյակ լինեն, որ օրենքը նախատեսում է մի շարք քրեորեն պատժելի արարքներ: Դրանք ներառում են կաշառքը՝ որևէ մեկին ֆինանսական կամ այլ օգուտ առաջարկելով ոչ պատշաճ

գործողություն կատարելուն դրդելը, ինչպես նաև օտարերկրյա պաշտոնյաներին կաշառելը կամ նրանցից կաշառք ստանալը:

Որոշ դեպքերում հանրային պաշտոնյաներից նվեր ստանալը կամ նրանց նվեր առաջարկելը, իրենց պարտականությունների կատարումն ապահովելու կամ արագացնելու համար, անօրինական է:

Թեև հանրային շահի պաշտպանության փաստարկը կարող է բացակայել, եթե անձն իր անվտանգությունը պաշտպանելու այլ տարբերակ չունի, քան աջակցության համար վճարելը: Այս դեպքում կիրառելի է «հարկադրված հանգամանք» փաստարկը:

Եթե կասկածներ կան վճարների համապատասխանության հարցում, անձնակազմի անդամները պետք է նախապես այն քննարկեն պատասխանատու խմբագրի կամ ղեկավարության հետ: Եթե նման վճարներ են պահանջվում կամ արդեն արվել են, անհրաժեշտ է հնարավորինս շուտ տեղեկացնել գլխավոր խմբագրին՝ ներկայացնելով հանգամանքները:

գ) Ֆրիլանսերի հետ աշխատանք

«Գեղամա» հեռուստաընկերությունն կարևորում է ֆրիլանսերների հանդեպ արդար վերաբերմունքը: Ֆրիլանս հեղինակներ ներգրավելիս խմբագրությունն առաջնորդվում է տեղական և միջազգային լավագույն փորձով:

դ) Գաղտնիություն

Անձնակազմի անդամների անձնական տվյալներին մուտք ունեցող խմբագիրները և բաժինների ղեկավարները պետք է տվյալները պատշաճ պահպանեն և չբացահայտեն երրորդ անձանց, բացառությամբ մասնագիտական պարտականությունների կատարման:

ե) Հեղինակային իրավունք

Լրագրողները չպետք է օգտագործեն չարտոնված աղբյուրներից ստացված բովանդակություն (նկար, տեքստ կամ այլ նյութ)՝ առանց համապատասխան թույլտվություն ստանալու: Այնուամենայնիվ, հեղինակային իրավունքով պաշտպանված նյութերի օգտագործումը լուրերի, քննադատության կամ վերլուծության հրապարակման նպատակով ընդունելի է և սովորաբար օրենքի և էթիկայի տեսանկյունից արդարացված:

Կան որոշ իրավիճակներ, երբ թույլտվություն չի պահանջվում, սակայն լրագրողները պետք է խորհրդակցեն պատասխանատու խմբագրի կամ իրավաբանների հետ՝ նախքան նյութերն առանց հեղինակային իրավունքի թույլտվության օգտագործելը:

Հատկապես կարևոր է, որ լրագրողները տեղյակ լինեն կայքերից վերցված բովանդակություն օգտագործելու կանոններին:

գ) Մխալներ

Մեր քաղաքականությունն է անհապաղ շտկել էական սխալները: Լրագրողները պարտավոր են համագործակցել պատասխանատու խմբագրի և ղեկավարության հետ և անմիջապես տեղեկացնել սխալների մասին: Բոլոր բողոքները պետք է գրանցվեն և ներկայացվեն պատասխանատու խմբագրին: Ընթերցողներին պետք տեղեկացնել բողոքներ ներկայացնելու և դրանց քննարկման գործընթացի մասին:

է) Իրավական հարցեր

Զրպարտության իրավական կարգավորումները մշտապես փոփոխվում են և բավական բարդ են: Դատական գործընթացները կարող են թանկ լինել և վնասել մեր հեղինակությանը:

Անձնակազմի անդամները պետք է.

1. Ծանոթանան օրենքի կարգավորումներին և պարզեն անհասկանալի դրույթները,
2. Խորհրդակցեն կազմակերպության իրավաբանների հետ՝ իրենց նյութերին առնչվող իրավական խնդիրների դեպքում,
3. Ուսումնասիրեն իրենց աշխատանքին առնչվող ընթացիկ դատական գործերը:

ը) Անձնական կյանքի պաշտպանություն

Մենք պարտավորվում ենք հարգել մարդկյանց անձնական կյանքի գաղտնիությունը: Լրագրությունն իր բնույթով միջամտում է անձնական կյանքի գաղտնիությանը, սակայն մենք պետք է խուսափենք անհարկի միջամտությունից: Որոշ իրավիճակներում հանրային շահը պահանջում է զոհաբերել անձնական կյանքի գաղտնիությունը:

Համաչափությունն ու նախնական խորը վերլուծությունն անհրաժեշտ են նման դեպքերում: Միջամտությունը պետք է արդարացվի լուրի արժեքավորությամբ և հանրային շահով: Անհրաժեշտության դեպքում միջամտությունը պետք է հաստատվի խմբագրի կողմից:

Ինչպես նաև հետաքննության հիմքերը պետք է շատ ամուր լինեն. մենք չենք զբաղվում ենթադրություններով, եթե հարցի կարևորությունը, կասկածները և հաջողության հավանականությունը լուրջ չեն:

Զգուշություն է պետք դրսևորել նաև նույնականացնող տվյալներ հրապարակելիս, ինչպիսիք են օրինակ, փողոցների անվանումները և շենքերի համարները, որոնք հնարավորություն են տալիս նույնականացնել մեդիայի ուշադրության կենտրոնում հայտնված մարդկանց և հանգեցնել նրանց անձնական կյանքի գաղտնիության կամ անվտանգության խախտման:

ի) Համագործակցություն հանրության հետ

Ընթերցողների և մեր լսարանի հետ հարաբերվելիս քաղաքավարությունը պարտադիր է՝ անկախ նրանից՝ հաղորդակցությունը տեղի է ունենում անձամբ, հեռախոսով, նամակագրությամբ, թե էլեկտրոնային փոստով:

Կազմակերպությունը գիտակցում է, որ առցանց հաղորդակցությունը (օրինակ՝ բլոգներում և սոցիալական ցանցերում) կարող է լինել նվազ պաշտոնական, կտրուկ և նույնիսկ բանավեճերի ժամանակ՝ մարտական տոնայնությամբ: Սակայն լրագրողները պետք է հաշվի առնեն բլոգինգի և սոցիալական մեդիայի օգտագործման կանոնները:

Սոցիալական մեդիա օգտագործելիս լրագրողները պետք է խուսափեն այնպիսի հրապարակային պնդումներից, որոնք կարող են վտանգել կազմակերպության անկողմնապահությունը կամ կասկածի տակ դնել իրենց անկախությունը: Նման գործողությունները չպետք է հակասեն այս ուղեցույցում սահմանված մասնագիտական սկզբունքներին:

2. Խմբագրական կանոններ

ա) Ճշգրտություն և ստուգում

Մեր տեղեկատվության ճշգրտության, իսկության և արժանահավատության նկատմամբ վստահությունը հիմնարար է: Թվային հաղորդակցությունը լի է մարտահրավերներով, ուստի մենք պահանջում ենք տեղեկատվությունը ստանալ բացառապես հուսալի աղբյուրներից:

Լրագրողները պետք է նշեն, թե ինչպես են ստուգել տեղեկությունները, միաժամանակ հստակեցնեն, թե որ տեղեկությունները հնարավոր չի եղել ստուգել:

Մենք չենք ներկայացնում որպես փաստ այն տեղեկությունը, որը ձեռք ենք բերել այնպիսի աղբյուրից, որը հնարավոր չէ նույնականացնել (օրինակ՝ «Ուսանող, ով պնդում է, որ ականատես է եղել անկարգությունների», **այլ ոչ թե** «Ուսանող, ով ականատես է եղել անկարգությունների»):

Անհրաժեշտության դեպքում մենք բացատրում ենք ընթերցողներին, թե ինչ միջոցներ ենք օգտագործել հարցազրույցներ անցկացնելու և տեղեկությունները ստուգելու համար: Աղբյուրների հուսալիության ապահովման համար պատասխանատվությունը կրում են և՛ լրագրողները, և՛ խմբագիրները:

բ) Անանուն մեջբերումներ

Մարդիկ հաճախ ավելի բաց են խոսում անանուն մնալու պայմանով: Մակայն անանուն աղբյուրների չափից շատ օգտագործումը կարող է ծառայել քաղաքական, առևտրային կամ այլ անձնական շահերի:

Մենք ձգտում ենք ազնիվ լինել աղբյուրների հարցում, նույնիսկ եթե պետք է անանուն օգտագործենք:

զ) Տեղեկատվության աղբյուրներ

Այն աղբյուրները, ովքեր տրամադրում են տեղեկատվություն իրենց ռիսկի ենթարկելով, պետք է ստանան գաղտնիությունը պահպանելու խոստում: Նրանց անանունությունը պետք է պահպանվի ամեն գնով: Այնուամենայնիվ, հնարավորության դեպքում տեղեկատվության աղբյուրները պետք է նույնականացվեն հնարավորինս հստակ:

Անձնակազմը չպետք է վերարտադրի այլոց նյութերը՝ առանց պատշաճ հղման, բացառությամբ որոշ եզակի դեպքերի: Օրինակ, երբ աղբյուրի պաշտպանությունն անհրաժեշտ է, և միայն պատասխանատու խմբագրի թույլտվությամբ:

Անհրաժեշտ է նշել նաև այլ կազմակերպությունից ստացված նյութի աղբյուրը, ներառյալ այլ լրատվամիջոցների նյութերից վերցված մեջբերումները:

Հեղինակները պետք է նշվեն միայն այն նյութի վրա, որն էականորեն տվյալ լրագրողի աշխատանքն է: Եթե նյութի հիմնական մասը վերցված է լրատվական գործակալության տարածած տեքստից, ապա լրատվական գործակալությունը նույնպես պետք է պարտադիր նշվի:

դ) Հոդվածի նախնական հաստատում

Որպես կանոն, հարցազրույցի մասնակիցներին կամ երրորդ կողմին չպետք է տրվի նյութի նախնական տարբերակը հաստատելու իրավունք:

Որոշակի հանգամանքներում մենք կարող ենք թույլ տալ մարդկանց տեսնել նյութի նախագիծը կամ մեջբերումը՝ ճշգրտության ապահովման նպատակով, բայց մենք պարտավոր չենք փոխել նյութը:

Պետք է խուսափել նյութի նախագծի հաստատման հնարավորություն առաջարկելուց:

ե) Երեխաների մասին հաղորդումներ

Հատուկ խնամք է պահանջվում երեխաների հետ աշխատելիս (տարիքը՝ մինչև 16 տարեկան, իսկ միջազգային իրավունքով՝ մինչև 18 տարեկան):

Երեխաներին չպետք է հարցեր տալ այնպիսի թեմաներից, որոնք դուրս են նրանց գիտելիքի և պատասխանելու կարողության շրջանակից:

Երեխաներին առանց ծնողի կամ օրինական ներկայացուցչի համաձայնության նկարահանելիս կամ նրանցից հարցազրույց վերցնելիս անհրաժեշտ է տեղեկացնել պատասխանատու խմբագրին:

Անհրաժեշտ է ստանալ հրապարակելու համաձայնություն, երբ երեխան լիարժեք ունակ է որոշումներ կայացնել:

Լրագրողները չպետք է միջամտեն երեխաների անձնական կյանք առանց նրանց համաձայնության: Այն կարող է տեղի ունենալ բացառապես հանրային մեծ անհրաժեշտության հիմնավորման դեպքում:

զ) Ուղղակի մեջբերումներ

Ուղղակի մեջբերումների իմաստը կամ համատեքստը երբեք չպետք է փոխվի, թեև փոքր խմբագրումների կարիք կարող է լինել տեքստն ավելի հստակեցնելու համար:

է) Հանրային աջակցություն

Լրագրողները չպետք է համաձայնեն գովազդել հարցազրույց տվողների կամ հովանավորների ֆինանսական շահերը՝ տեքստերի, լուսանկարների կամ ծանոթագրությունների միջոցով՝ նրանց հասանելիություն ստանալու համար: Թեմայի վերաբերյալ գովազդային տեղեկատվությունը պետք է ներառվի միայն այն դեպքում, երբ այն բացառիկ հետաքրքիր կամ օգտակար է ընթերցողի համար:

ը) Արդարություն և բառապաշարի օգտագործում

Մենք ձգտում ենք ապահովել ներառական և արդար լրատվություն, որը ձայն է տալիս քննադատության ենթարկվող մարդկանց կամ խմբերին: Որքան լուրջ են մեր հնչեցրած քննադատությունները կամ մեղադրանքները, այնքան մեծ է պարտավորությունը՝ հնարավորություն ընձեռել արձագանքել թեմային:

Պատասխանի այս իրավունքը պետք է տրվի քննադատության թիրախ դարձած բոլոր անհատներին և խմբերին, այդ թվում՝ փոքրամասնություններին:

Մեր լրագրողներն ու խմբագիրները հարգում են ընթերցողին, և մենք չպետք է անզգուշորեն օգտագործենք բառեր, որոնք կարող են վիրավորել: Օրինակ՝ հայհոյանքը պետք է օգտագործվի միայն այն դեպքում, երբ բացարձակապես անհրաժեշտ է նյութի

փաստերը կամ նյութի որևէ կերպար ներկայացնելու համար, և միայն որպես ուղղակի մեջբերում: Մենք խուսափում ենք նման բառապաշար վերնագրերում օգտագործելուց կամ այլ կերպ դրանք ընդգծելուց:

Արդարություն չի նշանակում բոլոր տեսակետների «կեղծ» համահարթեցում: Երբ գիտական կամ այլ ապացույցներն հանգում են որոշակի եզրակացության՝ կասկածի տեղ չթողնելով, մրցակցող պնդումները չպետք է ներկայացվեն որպես կենսունակ այլընտրանքային տեսակետ:

թ) Ապրումակցում

Վիշտ կամ հոգևոր կորուստ ապրող մարդկանց նկատմամբ պետք է ցուցաբերել հատուկ զգայունություն:

ժ) Նկարներ, պատկերներ և տեսանյութեր

Նկարները կամ աուդիովիզուալ նյութերը փոփոխելն ընդհանուր առմամբ անընդունելի է: Եթե արվում է, ապա պետք է հստակ նշում պարունակեն փոփոխված լինելու մասին:

ժա) Էթնիկ պատկանելիություն

Ընդհանրապես մենք չենք հրապարակում անձի ռասայական կամ կրոնական պատկանելությունը, եթե դա չի առնչվում լուրի բովանդակությանը: Քրեական հանցագործության մեջ մեղադրվող անձանց ազգային պատկանելությունը չի նշվում բացառությամբ այն դեպքերի, եթե դա արվում է նրանց նույնականացնելու նպատակով (օրինակ՝ աստելության հողի վրա կատարված հանցագործության դեպքում):

ժբ) Գաղտնի մեթոդներ

Լրագրողները պետք է անկեղծ լինեն և նյութերի վրա աշխատելիս ներկայանան որպես լրագրող: Կարող են լինել դեպքեր, երբ թեման հանրային բացառիկ կարևորության հարցի է վերաբերում: Այս դեպքում անհրաժեշտ է ստանալ պատասխանատու խմբագրի հաստատումը գաղտնի մեթոդներ կիրառելուց առաջ:

ժգ) Ինքնավնասման դեպքերի լուսաբանումը

Լրագրողները պետք է հատուկ զգուշավորություն դրսևորեն ինքնավնասման դեպքերի լուսաբանման ժամանակ, մասնավորապես խուսափեն ինքնասպանության մեթոդների մանրամասն նկարագրությունից: Պետք է խուսափել այնպիսի լուսաբանումից, որը կարող է խրախուսել մյուսներին կամ կարող է վտանգել ներգրավված այլ անձանց անձնական կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ հարազատների:

Սա պետք է հաշվի առնել ինչպես լուսանկարներ հրապարակելիս, այնպես էլ ինքնավնասման մեթոդը նկարագրելիս:

Անհրժեշտության դեպքում պետք է տրամադրվի համապատասխան օգնություն տրամադրող թեժ գծի հեռախոսահամար, ինչպես նաև ինքնասպանությունների կանխարգելման և աջակցության խմբերի վերաբերյալ ընդհանուր տեղեկատվություն:

3. Շահերի բախում

«Գեղամա» հեռուստաընկերությունը բարձր է գնահատում իր անկախությունը և բարեխղճությունը:

Պարզ է, որ լրագրողներն ունեն իրենց կյանքը աշխատանքից դուրս, անձնական հետաքրքրություններ, հոբբիներ, համոզմունքներ: Մենք ձգտում ենք ապահովել, որ լրագրողների անձնական շահերը չհակասեն մեր գործունեությանը կամ կասկածի տակ չդնեն մեր բարեխղճությունը:

Մենք գիտակցում ենք, որ անաչառությունը բոլորի համար միատեսակ կանոն չէ: Օրինակ՝ իր կարծիքն արտահայտող սյունակագիրը կարող է ավելի մեծ ազատություն ունենալ, քան լուրերի լրագրողը, որից ակնկալվում են օբյեկտիվության ավելի խիստ որակներ: Անհրժեշտության դեպքում լրագրողները պետք է խորհրդակցեն պատասխանատու խմբագրի հետ:

ա) Անվճար նվերներ և շահույթ

Անձնակազմը չպետք է առաջնորդվի առևտրային շահերով (ներառյալ գովազդատուների շահերը):

Անձնակազմի որևէ անդամ չպետք է օգտագործի իր դիրքը՝ անձնական օգուտ ստանալու համար: Մենք չենք ընդունում որևէ վճար, նվեր կամ առավելություն, որը կարող է խաթարել մեր ճշգրտությունը, արդարությունը կամ անկախությունը:

Խմբագրական դրական վերաբերմունք ստանալուն ուղղված ցանկացած փորձի մասին՝ նվերների կամ ծառայությունների տեսքով, պետք է տեղեկացվի խմբագրին: Անհրժեշտության դեպքում՝ վճարումները, նվերները կամ այլ օգուտները պետք է բացահայտվեն:

Անձնակազմը չպետք է օգտագործի իր դիրքը՝ անձնական, ֆինանսական կամ առևտրային գործարքներում առավելություններ ստանալու համար:

Մենք պետք է բացահայտենք, թե երբ է ավիարնկերությունը, հյուրանոցը կամ այլ շահագրգիռ կողմ վճարել լրագրողի տրանսպորտի կամ կեցության ծախսերը: Նման

առաջարկի ընդունումը պայմանավորված է խմբագրական անձնակազմի որոշմամբ՝ լուսաբանել, թե չլուսաբանել տվյալ նյութը:

բ) Առևտրային շահեր

Ոչ մի լրագրող չպետք է գովազդի առևտրային ապրանք կամ ծառայություն՝ առանց պատասխանատու խմբագրի թույլտվության: Մենք չպետք է զբաղվենք գովազդային նյութերի ստեղծմամբ:

գ) Արտաքին շահեր

Անձնակազմի անդամներն իրավունք ունեն աշխատանքից դուրս այլ գործունեություն ծավալել (ներառյալ այլ կազմակերպություններում, առևտրային ընկերություններում կամ քաղաքական կուսակցություններում ակտիվ ներգրավվելը): Սակայն, սա կարող է երբեմն ընկալվել որպես մեր լրագրողական բարեխղճության վրա ազդեցություն:

Անձնակազմի անդամները պետք է գլխավոր խմբագրին տեղեկացնեն ցանկացած արտաքին անձնական կամ ֆինանսական շահերի մասին, որոնք կարող են հակասել նրանց մասնագիտական գործունեությանը կամ կարող են ընկալվել որպես այդպիսին:

դ) Շահերի բացահայտում

Լրագրողները պետք է բացահայտեն ցանկացած շահ, երբ աշխատում են իրենց անմիջականորեն առնչվող թեմայի վրա: Այս կանոնը վերաբերում է ն՝ անձնակազմի լրագրողներին, ն՝ ֆրիլանսերներին: Լիարժեք թափանցիկությունը պահանջում է շահերը բացահայտել և հրապարակել լրատվամիջոցի կայքում կամ տպագիր տարբերակում:

Ի դեպ, պարտադիր չէ, որ առնչությունը պաշտոնական բնույթ ունենա, որպեսզի կիրառելի լինի հրապարակման պահանջը: Օրինակ՝ կազմակերպության համար զեկույց պատրաստելիս խորհրդատվական աջակցություն տրամադրելը պահանջում է բացահայտում:

Ընդհանուր առմամբ, լրագրողը չպետք է նյութ գրի իր ազգականի կամ զուգընկերոջ մասին կամ նյութում մեջբերի նրա խոսքը, նույնիսկ եթե վերջիններս տվյալ ոլորտի մասնագետ են: Եթե որևէ պատճառով այս կանոնից բացառություն է արվում, առնչությունը նյութում պետք է հստակ նշվի:

Խմբագիրները պետք է ապահովեն, որ լրագրողները պատշաճ իրազեկվեն այս կանոններին և անհրաժեշտության դեպքում կատարեն անհրաժեշտ բացահայտում:

ե) Կորպորատիվ շահերի բացահայտում

«Գեղամա» հեռուստաընկերությունը հրապարակային ներկայացնում է, թե ինչ այլ լրատվամիջոցների կամ ընկերությունների հետ է փոխկապակցված: Առկայության դեպքում խմբագրությունը բացահայտում է այդ կապերը իր նյութերում: Մեզ առնչվող բիզնեսների վերաբերյալ նյութ գրող յուրաքանչյուր ոք պետք է մեկնաբանություններ և/կամ հաստատումներ ստանա ստանդարտ եղանակով: Անձնակազմը պետք է ծանոթ լինի մեր լրատվամիջոցի ունեցած ընկերություններին և առևտրային շահերին:

«Գեղամա» հեռուստաընկերությանը փոխկապակցված ընկերությունների մասին տեղակատվությունը հասանելի է հեռուստաընկերության պաշտոնական կայքում:

զ) Ֆինանսական լրագրություն

«Գեղամա» հեռուստաընկերությունը վարում է բաժնեմասերի գրանցամատյան, որտեղ նշվում են բոլոր այն բաժնետոմսերը, որոնք կարող են շահերի ենթադրյալ բախման առիթ լինել:

Բոլոր աշխատակիցներից ակնկալվում է հայտնել բոլոր այն ֆինանսական գործարքների մասին, որոնք անհրաժեշտ են շահերի հնարավոր բախումից խուսափելու համար:

Տեղեկատվությունը պետք է պարբերաբար թարմացվի:

Այս համատեքստում մեր խմբագրական սկզբունքներն են՝

- Արգելվում է օգտագործել ֆինանսական տեղեկատվությունը լրագրողների կամ նրանց գործընկերների շահույթ ստանալու համար:
- Սահմանափակումներ են նախատեսվում այն լրագրողների համար, որոնք գրում են բաժնետոմսերի մասին, որոնցում իրենք կամ իրենց մերձավորները զգալի շահագրգռվածություն ունեն:
- Արգելվում են լրագրողներին զբաղվել այն բաժնետոմսերով, որոնց մասին նրանք վերջերս նյութ են գրել կամ մտադիր են գրել մոտ ապագայում:
- Ֆինանսական լրագրողներից պահանջվում է զգույշ լինել նյութերում ներկայացվող տվյալների ճշգրտման հարցում, հստակ առանձնացնել ֆինանսներին վերաբերող մեկնաբանությունը, ենթադրությունը և փաստը:

Սա հատկապես կարևոր է այն լրագրողների համար, ովքեր խորհուրդ են տալիս ընթերցողներին՝ բաժնետոմսեր գնել, վաճառել կամ պահել:

է) Արտաքին ներգրավվածություն

Ընկերությունը ընդունում է լրագրողի անձնական կյանքի և քաղաքացիական հասարակությանը մասնակցելու իրավունքը: Այնուամենայնիվ, աշխատակիցները պետք

Է տեղեկացնեն պատասխանատու խմբագրին կամ գլխավոր խմբագրին, եթե որպես աշխատակից՝ նրանք մտադիր են.

- Դատարանում ցուցմունք տալ,

- Մասնակցել հանրային քննարկումների կամ սեմինարների, վարել դրանք,

- Զբաղվել այլ աշխատանքով, որը կարող է հակասել մասնագիտական պարտականություններին:

Որպես լրատվամիջոցի ներկայացուցիչ բանավեճեր վարելու հրավեր ստացած լրագրողները սովորաբար չպետք է պահանջեն վճար դրա դիմաց, եթե միջոցառմանը նախապատրաստվելը կամ մասնակցելը չի պահանջում անձնական ժամանակի զգալի ծախս:

Վճարման ընդունումը պետք է նախապես հաստատվի պատասխանատու խմբագրի կամ գլխավոր խմբագրի կողմից՝ հատուկ ուշադրություն դարձնելով այս ուղեցույցի դրույթներին, ինչպիսիք են շահերի բախումը և շահերի բացահայտումը: Կարող են ընդունելի լինել տեղափոխման և այլ ողջամիտ ծախսեր: Ընդհանուր առմամբ, աշխատակից լրագրողները չպետք է հասարակայնության հետ կապերի վերաբերյալ խորհուրդներ տան, հատկապես այն լսարանին, որը վճարել է մասնակցելու համար: Կասկածների դեպքում խնդրում ենք խորհրդակցել խմբագրի հետ:

ը) Անձնական հարաբերություններ

Աշխատակազմի անդամները չպետք է գրեն, լուսաբանեն, լուսանկարեն կամ խմբագրեն նյութեր որևէ անձի կամ հարաբերության մասին, որոնք կապված են իրենց կամ իրենց մերձավորների, մտերիմների հետ: Նման իրավիճակում հայտնվելու պարագայում պետք է տեղեկացնել պատասխանատու խմբագրին:

Նշում. Եթե լրագրողը կամ խմբագիրը մտահոգություններ ունի խմբագրական աշխատանքի որևէ ասպեկտում վարքագծի կամ վարքագծի էթիկական հետևանքների վերաբերյալ, պետք է խորհուրդ հարցնի լրատվամիջոցի գլխավոր խմբագրից: Որոշ դեպքերում մենք կարող ենք խորհրդատվություն խնդրել նաև համապատասխան ոլորտային մարմիններից կամ փորձագետներից:

**Ուղեցույցը մշակվել է Լրագրողներ առանց սահմանների կազմակերպության (Reporters sans frontières -RSF) կողմից մշակված մոդելային ուղեցույցի հիման վրա:*